ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 678-Ա 14 նոյեմբերի 2025 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՌՈՒԶԱՆՆԱ ՊԻՊՈՅԱՆԻՆ ԷՍՏՈՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԳԱՅԱՆԵ ԽԱՆԱՄԻՐՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության 2025 թվականի նոյեմբերի 12-ի N 1101/62540-25 գրությունը, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության,մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի 2025 թվականի նոյեմբերի 14-ի N 02/09.3/38180-2025 գրությունը, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի Հ. Թումանյանի անվան N 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ռուզաննա Պիպոյանի 2025 թվականի նոյեմբերի 14-ի N 166/25 գրությունը

որոշում եմ՝

1. Էստոնիայի Հանրապետության Կրթական գիտությունների ինստիտուտի և Տալլինի համալսարանի, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի հետ իրականացվող «Ապագայի դպրոց» ծրագրին մասնակցելու նպատակով «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի Հ. Թումանյանի անվան N 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ռուզաննա Պիպոյանին 2025 թվականի նոյեմբերի 16-ից 2025 թվականի նոյեմբերի 20-ը ներառյալ գործուղել Էստոնիայի Հանրապետություն, քաղաք Տալլին:

2. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի Հ. Թումանյանի անվան N 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային

կազմակերպության տնօրեն Ռուզաննա Պիպոյանի գործուղման մեջ գտնվելու ժամանակահատվածում «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի Հ. Թումանյանի անվան N 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների և պարտականությունների կատարումը վերապահել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի Հ. Թումանյանի անվան N 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Գայանե Խանամիրյանին (առանց տնօրենի պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի վճարման, համաձայնությամբ):

3. Ընդունել ի գիտություն, որ Ռուզաննա Պիպոյանի՝ Էստոնիայի Հանրապետություն գործուղման ծախսերը կատարվելու են հրավիրող կողմի միջոցների հաշվին:

4. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի Հ. Թումանյանի անվան N 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ռուզաննա Պիպոյանին՝ գործողումից վերադառնալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գործառույթները:

14.11.2025

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
ք. Գավառ